ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-18/71

ք. Տաշիր «08» **օգոստոսի 2018թ.**

«ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարան»-ը ի դեմս համայնքի ղեկավար Էդգար Արշակյանի, որը գործում է «ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարան»-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՎԱՀՐԱԴՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Վահրադյանի, որը գործում է «ՎԱՀՐԱԴՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված *Տաշիր համայնքի փողոցների վերանորոգման* աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 30 սեպտեմբերի 2018թ.:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օր (առնվազն 365 օրացուցային օր): Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա

Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները[1]:

3.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված

---

[1] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնման առարկա հանդիսացող շինարարական ծրագիրը պահանջում է նախագծային փաստաթղթեր:*

հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 7 488 300 (յոթ միլիոն չորս հարյուր ութսունութ հազար երեք հարյուր) ՀՀ դրամ, որից 1248050 (մեկ միլիոն երկու հարյուր քառասունութ հազար հիսուն) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏxԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է.

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է.

ՎԳՏ- նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ

գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Տաշիրի համայնքապետարան	**«ՎԱՀՐԱԴՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ**
ք. Տաշիր, Վ. Սարգսյան 94	**ք. Ստեփանավան, Բաղրամյան 19 8**
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն	**«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ**
Հ/Հ 900272360034	**Հ/Հ 2052322277721001**
ՀՎՀՀ 06954139	**06406394**
Է. Արշակյան	**Մ. Վահրադյան**
(ստորագրություն)	**(ստորագրություն)**
Կ.Տ.	**Կ.Տ**

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված թիվ 1
«08» օգոստոսի 2018թ. կնքված
N ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-18/71
ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ[2]*
«ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐԱԳՄԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

NN ը/կ	Հիմնավորում	Աշխատանքի անվանումը	Չափ. միավ.	Քանակ	1 միավ. ընդ.արժ. հազ.դր.	Ընդհանուր արժեքը հազ.դր.
1	2	3	4	5	6	7
		Լեռնահովիտ բնակավայր				
1	27-23	գոյություն ունեցող հիմքի վրա ավելացում խիճ /նյութածախս 100մԱ - 20-:-40ֆրակ-5.5մա10-:-20ֆրակ - 1.15 մա/	100մ^2	1.3000	66.659	86.656
2	27-251	Բիտումի տարածում ճանապարհային հիմքի վրա 1.2 տն/ 1000մԱ	տն	0.156	252.259	39.35
3	16-4-վ	Փոսային նորոգում h = 5 սմ հաստ.մինչև 5 մԱ մակերեսով «Բ»տիպի վերին շերտ ա/բետ.	100մ^2	0.88	567.567	499.459
4	16-4-վ	Փոսային նորոգում h = 5 սմ հաստ.5 մԱ մակերեսից ավել«Բ»տիպի վերին շերտ ա/բետ.	100մ^2	0.4220	533.830	225.276
5	1-1593	Շին աղբի բարձում ինքնաթափին էքսկավատորով	1000մ^3	0.0039	780.823	3.05
6	Գ310-5	Տեղափոխում 5 կմ աղբավայր	տն	7.8	1.801	14.05
7	27-251	Բիտումի տարածում ճաքերում 1,03 կգ / գծմ	տն	1.722	252.224	434.33
8	27--28	Ասֆալբետոնե շերտի «Բ» տիպի իրականացում ասֆալտե արհեստական խոչնդոտ	տն	5.63	39.468	222.20
		Մեղովկա բնակավայր				
1	27-23	գոյություն ունեցող հիմքի վրա ավելացում խիճ /նյութածախս 100մԱ - 20-:-40ֆրակ-5.5մա10-:-20ֆրակ - 1.15 մա/	100մ^2	0.0695	66.659	4.633
2	27-251	Բիտումի տարածում ճանապարհային հիմքի վրա 1.2 տն/ 1000մԱ	տն	0.0083	252.259	2.09
3	16-4-վ	Փոսային նորոգում h = 5 սմ հաստ.մինչև 5 մԱ մակերեսով «Բ»տիպի վերին շերտ ա/բետ.	100մ^2	0.0695	567.567	39.446
4	1-1593	Շին աղբի բարձում ինքնաթափին էքսկավատորով	1000մ^3	0.0002	780.823	0.16
5	Գ310-5	Տեղափոխում 5 կմ աղբավայր	տն	0.400	1.801	0.72
6	27-251	Բիտումի տարածում ճաքերում 1,03 կգ / գծմ	տն	0.3306	252.224	83.39
		Կաթնառատ բնակավայր				
1	27-23	գոյություն ունեցող հիմքի վրա ավելացում խիճ /նյութածախս 100մԱ - 20-:-40ֆրակ-5.5մա10-:-20ֆրակ - 1.15 մա/	100մ^2	3.7990	66.659	253.237
2	27-251	Բիտումի տարածում ճանապարհային հիմքի վրա 1.2 տն/ 1000մԱ	տն	0.456	252.259	115.03
3	16-4-վ	Փոսային նորոգում h = 5 սմ հաստ.մինչև 5 մԱ մակերեսով «Բ»տիպի վերին շերտ ա/բետ.	100մ^2	1.4640	567.567	830.918
4	16-4-վ	Փոսային նորոգում h = 5 սմ հաստ.5 մԱ մակերեսից ավել«Բ»տիպի վերին շերտ ա/բետ.	100մ^2	2.3350	533.830	1246.493

[2] *Ծավալաթերթ-նախահաշիվը հրապարակվում է ներառյալ ըստ աշխատանքների կատարման արժեքների:*

5	1-1593	Շին աղբի բարձում ինքնաթափին էքսկավատորով	1000մ³	0.0114	780.823	8.90
6	Գ310-5	Տեղափոխում 5 կմ աղբավայր	տն	22.8	1.801	41.07
7	27-251	Բիտումի տարածում ճաքերում 1,03 կգ / գծմ	տն	0.705	252.224	177.818
		Խանջյան փողոց				
1	27-23	գոյություն ունեցող հիմքի վրա ավելացում խիճ /նյութածախս 100մԱ - 20-:-40ֆրակ-5.5մա10-:-20ֆրակ - 1.15 մա/	100մ²	0.3000	66.659	19.998
2	27-251	Բիտումի տարածում ճանապարհային հիմքի վրա 1.2 տն/ 1000մԱ	տն	0.036	252.259	9.08
3	16-4-վ	Փոսային նորոգում h = 5 սմ հաստ.մինչև 5 մԱ մակերեսով «Բ»տիպի վերին շերտ ա/բետ.	100մ²	0.2250	567.567	127.703
4	16-4-վ	Փոսային նորոգում h = 5 սմ հաստ.5 մԱ մակերեսից ավել«Բ»տիպի վերին շերտ ա/բետ.	100մ²	0.0750	533.830	40.037
5	1-1593	Շին աղբի բարձում ինքնաթափին էքսկավատորով	1000մ³	0.0009	780.823	0.70
6	Գ310-5	Տեղափոխում 5 կմ աղբավայր	տն	1.8	1.801	3.24
7	27-251	Բիտումի տարածում ճաքերում 1,03 կգ / գծմ	տն	0.15656	252.224	39.488
		Էրեբունի փողոց				
1	27-23	գոյություն ունեցող հիմքի վրա ավելացում խիճ /նյութածախս 100մԱ - 20-:-40ֆրակ-5.5մա10-:-20ֆրակ - 1.15 մա/	100մ²	0.1290	66.659	8.599
2	27-251	Բիտումի տարածում ճանապարհային հիմքի վրա 1.2 տն/ 1000մԱ	տն	0.0155	252.259	3.91
3	16-4-վ	Փոսային նորոգում h = 5 սմ հաստ.մինչև 5 մԱ մակերեսով «Բ»տիպի վերին շերտ ա/բետ.	100մ²	0.129[illegible]	567.567	73.216
4	1-1593	Շին աղբի բարձում ինքնաթափին էքսկավատորով	1000մ³	0.0004	780.823	0.31
5	Գ310-5	Տեղափոխում 5 կմ աղբավայր	տն	0.8	1.801	1.44
		Աբովյան փողոց				
1	27-23	գոյություն ունեցող հիմքի վրա ավելացում խիճ /նյութածախս 100մԱ - 20-:-40ֆրակ-5.5մա10-:-20ֆրակ - 1.15 մա/	100մ²	0.0170	66.659	1.133
2	27-251	Բիտումի տարածում ճանապարհային հիմքի վրա 1.2 տն/ 1000մԱ	տն	0.002	252.259	0.50
3	16-4-վ	Փոսային նորոգում h = 5 սմ հաստ.մինչև 5 մԱ մակերեսով «Բ»տիպի վերին շերտ ա/բետ.	100մ²	0.0170	567.567	9.649
4	1-1593	Շին աղբի բարձում ինքնաթափին էքսկավատորով	1000մ³	0.00005	780.823	0.04
5	Գ310-5	Տեղափոխում 5 կմ աղբավայր	տն	0.1	1.801	0.18
6	27-251	Բիտումի տարածում ճաքերում 1,03 կգ / գծմ	տն	0.04223	252.224	10.651
		Կ. Դեմիրճյան փողոց				
1	27-23	գոյություն ունեցող հիմքի վրա ավելացում խիճ /նյութածախս 100մԱ - 20-:-40ֆրակ-5.5մա10-:-20ֆրակ - 1.15 մա/	100մ²	0.1200	66.659	7.999
2	27-251	Բիտումի տարածում ճանապարհային հիմքի վրա 1.2 տն/ 1000մԱ	տն	0.0144	252.259	3.63
3	16-4-վ	Փոսային նորոգում h = 5 սմ հաստ.մինչև 5 մԱ մակերեսով «Բ»տիպի վերին շերտ ա/բետ.	100մ²	0.1500	567.567	85.135
4	1-1593	Շին աղբի բարձում ինքնաթափին էքսկավատորով	1000մ³	0.00045	780.823	0.35
5	Գ310-5	Տեղափոխում 5 կմ աղբավայր	տն	0.9	1.801	1.62
6	27-251	Բիտումի տարածում ճաքերում 1,03 կգ / գծմ	տն	0.0999	252.224	25.197

		Վ,Սարգսյան փողոց				
1	27-23	գոյություն ունեցող հիմքի վրա ավելացում խիճ /նյութածախս 100մԱ - 20-:-40ֆրակ-5.5մա10-:-20ֆրակ - 1.15 մա/	100մ^2	0.2290	66.659	15.265
2	27-251	Բիտումի տարածում ճանապարհային հիմքի վրա 1.2 տն/ 1000մԱ	տն	0.028	252.259	6.94
3	16-4-վ	Փոսային նորոգում h = 5 սմ հաստ.մինչև 5 մԱ մակերեսով «Բ»տիպի վերին շերտ ա/բետ.	100մ^2	0.2290	567.567	129.973
4	1-1593	Շին աղբի բարձում ինքնաթափին էքսկավատորով	1000մ^3	0.0007	780.823	0.55
5	Գ310-5	Տեղափոխում 5 կմ աղբավայր	տն	1.4	1.801	2.52
6	27-251	Բիտումի տարածում ճաքերում 1,03 կգ / գծմ	տն	0.0062	252.224	1.564
		Շահումյան փողոց				
1	27-23	գոյություն ունեցող հիմքի վրա ավելացում խիճ /նյութածախս 100մԱ - 20-:-40ֆրակ-5.5մա10-:-20ֆրակ - 1.15 մա/	100մ^2	0.2090	66.659	13.932
2	27-251	Բիտումի տարածում ճանապարհային հիմքի վրա 1.2 տն/ 1000մԱ	տն	0.0251	252.259	6.33
3	16-4-վ	Փոսային նորոգում h = 5 սմ հաստ.մինչև 5 մԱ մակերեսով «Բ»տիպի վերին շերտ ա/բետ.	100մ^2	0.2090	567.567	118.622
4	1-1593	Շին աղբի բարձում ինքնաթափին էքսկավատորով	1000մ^3	0.0006	780.823	0.47
5	Գ310-5	Տեղափոխում 5 կմ աղբավայր	տն	1.2	1.801	2.16
		Այաթ -Նովա փողոց				
1	27-23	գոյություն ունեցող հիմքի վրա ավելացում խիճ /նյութածախս 100մԱ - 20-:-40ֆրակ-5.5մա10-:-20ֆրակ - 1.15 մա/	100մ^2	0.1310	66.659	8.732
2	27-251	Բիտումի տարածում ճանապարհային հիմքի վրա 1.2 տն/ 1000մԱ	տն	0.016	252.259	4.04
3	16-4-վ	Փոսային նորոգում h = 5 սմ հաստ.մինչև 5 մԱ մակերեսով «Բ»տիպի վերին շերտ ա/բետ.	100մ^2	0.1310	567.567	74.351
4	1-1593	Շին աղբի բարձում ինքնաթափին էքսկավատորով	1000մ^3	0.0004	780.823	0.31
5	Գ310-5	Տեղափոխում 5 կմ աղբավայր	տն	0.8	1.801	1.44
6	27-251	Բիտումի տարածում ճաքերում 1,03 կգ / գծմ	տն	0.0185	252.224	4.666
		Ջահուկյան փողոց -1				
1	27-23	գոյություն ունեցող հիմքի վրա ավելացում խիճ /նյութածախս 100մԱ - 20-:-40ֆրակ-5.5մա10-:-20ֆրակ - 1.15 մա/	100մ^2	0.1620	66.659	10.799
2	27-251	Բիտումի տարածում ճանապարհային հիմքի վրա 1.2 տն/ 1000մԱ	տն	0.017	252.259	4.29
3	16-4-վ	Փոսային նորոգում h = 5 սմ հաստ.մինչև 5 մԱ մակերեսով «Բ»տիպի վերին շերտ ա/բետ.	100մ^2	0.1620	567.567	91.946
4	1-1593	Շին աղբի բարձում ինքնաթափին էքսկավատորով	1000մ^3	0.0005	780.823	0.39
5	Գ310-5	Տեղափոխում 5 կմ աղբավայր	տն	1.0	1.801	1.80
		Ջահուկյան փողոց -2				
1	27-23	գոյություն ունեցող հիմքի վրա ավելացում խիճ /նյութածախս 100մԱ - 20-:-40ֆրակ-5.5մա10-:-20ֆրակ - 1.15 մա/	100մ^2	0.9340	66.659	62.259
2	27-251	Բիտումի տարածում ճանապարհային հիմքի վրա 1.2 տն/ 1000մԱ	տն	0.112	252.259	28.25

3	16-4-վ	Փոսային նորոգում h = 5 սմ հաստ.մինչև 5 մԱ մակերեսով «Բ»տիպի վերին շերտ ա/բետ.	100մ^2	0.5290	567.567	300.243
4	16-4-վ	Փոսային նորոգում h = 5 սմ հաստ.5 մԱ մակերեսից ավել«Բ»տիպի վերին շերտ ա/բետ.	100մ^2	0.4050	533.830	216.201
5	1-1593	Շին աղբի բարձում ինքնաթափին էքսկավատորով	1000մ^3	0.0028	780.823	2.19
6	Գ310-5	Տեղափոխում 5 կմ աղբավայր	տն	5.6	1.801	10.09
7	27-251	Բիտումի տարածում ճաքերում 1,03 կգ / գծմ	տն	0.089	252.224	22.448
		Գրիբոյեդովի փողոց				
1	27-23	գոյություն ունեցող հիմքի վրա ավելացում խիճ /նյութածախս 100մԱ - 20-:-40ֆրակ-5.5մա10-:-20ֆրակ - 1.15 մա/	100մ^2	0.0380	66.659	2.533
2	27-251	Բիտումի տարածում ճանապարհային հիմքի վրա 1.2 տն/ 1000մԱ	տն	0.005	252.259	1.16
3	16-4-վ	Փոսային նորոգում h = 5 սմ հաստ.մինչև 5 մԱ մակերեսով «Բ»տիպի վերին շերտ ա/բետ.	100մ^2	0.0380	567.567	21.568
4	1-1593	Շին աղբի բարձում ինքնաթափին էքսկավատորով	1000մ^3	0.0001	780.823	0.08
5	Գ310-5	Տեղափոխում 5 կմ աղբավայր	տն	0.2	1.801	0.36
		Կենտրոնական փողոցի մայթերի նորոգում				
1	27-23	գոյություն ունեցող հիմքի վրա ավելացում խիճ /նյութածախս 100մԱ - 20-:-40ֆրակ-5.5մա10-:-20ֆրակ - 1.15 մա/	100մ^2	1.0090	66.659	67.259
2	27-251	Բիտումի տարածում ճանապարհային	տն	0.121	252.259	30.52
		հիմքի վրա 1.2 տն/ 1000մԱ				
3	16-4-վ	Փոսային նորոգում h = 5 սմ հաստ.մինչև 5 մԱ մակերեսով «Բ»տիպի վերին շերտ ա/բետ.	100մ^2	0.9530	567.567	540.892
4	16-4-վ	Փոսային նորոգում h = 5 սմ հաստ.5 մԱ մակերեսից ավել«Բ»տիպի վերին շերտ ա/բետ.	100մ^2	0.0560	533.830	29.894
5	1-1593	Շին աղբի բարձում ինքնաթափին էքսկավատորով	1000մ^3	0.0030	780.823	2.34
6	Գ310-5	Տեղափոխում 5 կմ աղբավայր	տն	6.0	1.801	10.81
		Ընդամենը				6652.27
		20 % ԱԱՀ				1330.45
		Ընդամենը				7982.73

* Կապալառուն աշխատանքները կատարում է համապատասխան հասցեներում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Տաշիրի համայնքապետարան
ք. Տաշիր, Վ. Սարգսյան 94
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900272360034
ՀՎՀՀ 06954139

Է. Արշակյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ՎԱՀՐԱԴՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ
ք. Ստեփանավան, Բաղրամյան 19 8
«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 2052322277721001
06406394

Մ. Վահրադյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 2
« 08 » օգոստոսի 2018թ. կնքված
N ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-18/71
ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
« ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐԱԳՄԱՆ»
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N Ը/Կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐԱԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ**	**« 08 » օգոստոսի 2018թ.**	**Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված մինչև 30.09.2018թ.**
ԸՆԴԱՄԵՆԸ			

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Տաշիրի համայնքապետարան
ք. Տաշիր, Վ. Սարգսյան 94
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900272360034
ՀՎՀՀ 06954139

Է. Արշակյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ՎԱՀՐԱԴՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ
ք. Ստեփանավան, Բաղրամյան 19 8
«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 2052322277721001
06406394

Մ. Վահրադյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 3
« 08 » օգոստոսի 2018թ. կնքված
N ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-18/71
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45231177	Տաշիր համայնքի փողոցների վերանորոգման աշխատանքներ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	2246490	4492980	5990640	7488300	7488300	7488300

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Տաշիրի համայնքապետարան
ք. Տաշիր, Վ. Սարգսյան 94
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900272360034
ՀՎՀՀ 06954139

Է. Արշակյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ՎԱՀՐԱԴՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ
ք. Ստեփանավան, Բաղրամյան 19 8
«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 2052322277721001
06406394

Մ. Վահրադյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 4
« » օգոստոսի 2018թ. կնքված
N ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-18/71
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ
«ՎԱՀՐԱԴՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ
ք. Ստեփանավան, Բաղրամյան 19 8
«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 2052322277721001
06406394

Պատվիրատու
Տաշիրի համայնքապետարան
ք. Տաշիր, Վ. Սարգսյան 94
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900272360034
ՀՎՀՀ 06954139

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ***ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիր***
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «_____» **«օգոստոսի» 2018թ.**
Պայմանագրի համարը՝ **N ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-18/71**
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

ստորագրություն

Մ. Վահրադյան

Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց

ստորագրություն

Է. Արշակյան

Կ.Տ.

Հավելված 4.1
« » օգոստոսի 2018թ. կնքված
N ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-18/71
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և «ՎԱՀՐԱԴՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ –ի (այսուհետ՝ Կապալառու) միջև 2018թ. օգոստոսի_____-ին կնքված N ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-18/71 գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 2018թ. _____ _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված 9
«ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-18/71» ծածկագրով*
գնանշման հարցման հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան **«01»օգոստոսի 2018թ.****

<< Վահրադյան Շին >> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն՝ <<Մայիս Վահրադյան AK 0644463 տրված 27.10.2010թ. 053-ի կողմից >>, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի* (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ *ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-18/71** ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի /այսուհետ՝ Պահանջագիր/ ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև **/15/ 10 /2018թ**"** (Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան, իսկ պայմանագրով երաշխիքային ժամկետ սահմանված լինելու դեպքում՝ երաշխիքային ժամկետի ավարտին հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ):

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

Ընկերության անվանումը՝ Վահրադյան Շին ՍՊԸ
Հասցեն Ք.Ստեփանավան Չարենցի 175
Սպասարկող բանկի անվանումը, Ինեկո բանկ ՓԲԸ
Հ/Հ 2052322277721001
ՀՎՀՀ՝ 06406394
տնօրեն՝ Մայիս Վահրադյան
Կ.Տ

Օր/ամիս/տարի

** լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*
*** լրացվում է մասնակցի կողմից*

1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ**[1]

2. Թիվ

3. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն ՝ **<<Վահրադյան Շին>> ՍՊԸ**

5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ **<<Ինեկոբանկ>> ՓԲԸ**

6. Վճարողի հաշվի համարը՝ **2052322277721001**

7. Վճարողի ՀՎՀՀ՝ **06406394**

8. Վճարողի ՀԾՀ՝

9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն ՝ **ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարան**

10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)

11. Շահառուի ՀՎՀՀ՝ 06954139

12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) **900272360034**

14.Գումարը (թվերով և բառերով)՝ **748 830 /յոթ հարյուր քառասունութ հազար ութ հարյուր երեսուն/ ՀՀ դրամ**

15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

16.Արժույթը (բառերով և կոդով)՝ **ՀՀ դրամ, AMD**

17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(պայմանագրի կատարման ապահովման համար)*

18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝

ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-18/71

19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում>

20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ

22.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 22.բ. Կ.Տ.	21.ա. Վճարողի ստորագրությունները՝ /_____/ /_____/ 21.բ. Կ.Տ.

[1] *Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*

24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 24.բ. Կ.S. 24.գ "___" ___ 20___ թ.	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 23.բ. Կ.S. 23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.